ունենում՝ նեարդային հիւանդների եւ հասակն առած մարդկանց վրայ։

Մարս մոլորակը. — Աստեղաբաշխները երկար ժամանակ համոզուած էին, որ այս մոլորակը մթնոլորդով պատած է եւ նրա վրայ կենդանական կեանք կայ, այն մոլորութիւնը փարատուեցաւ վերջերս հեղինակաւոր Կէմպբէլ աստեղաբաշխի հետազօտութիւնով։ Կէմպբէլը Կալիֆորնեայի աստեղաբաշխական դիտարանից կարողացել է Մարսը դիտել այն ժամանակ, երբ նա երկրից այնքան հեռու է եղել, որքան լուսինն է եւ հասել է այն եզրակացութեան, որ Մարսի վրայ էլ ինչպէս եւ լուսնի վրայ մթնոլորդ չը կայ։

ԱԶԳԱՅԻՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱԶԱՐ ՎԵՑՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ.

Ազնուական ցեղերն իրենց տոհմերի հընութիւնով են պարծենում. հայ ազգը մարդկային ազգի հնագոյն տոհմերից մինն է, սակայն այդ չէ նրա պարծանքը։ Ընդհանուր ազգերի պատմութեան մէջ տեղ են ստանում միմիայն քաղաքակիրթ ազգերն եւ ի՞նչքան հին է մի ազգ իւր քաղաքակրթութեամբ, այնքան եւս մեծ գնահատութեան է արժանանում նա։ Հայ ազգի քաղաքակրթութեան պատմութիւնը քրիստոնէութիւնով է սկսւում; իսկ քրիստոնէութեան հաստատութիւնն Հայաստանում Ս. Գրիգոր Լուսաւորչով եւ նրա հիմնած Ս. Էջմիածնի կաթուղիկէով։

Ս. Էջմիածնի կաթուղիկէի հիմնարկութիւնը տեղի է ունեցել չորրորդ դարու սկզբին եւ ինչպէս աւանդական ժամանակագրութիւնը վկայում է Քրիստոսական 303 թուին։ Շուտով կը լրանի մի պատկառելի դարաշրջան, որի մասին ամէն մի հայ պարտական է մտածել։ Այլ եւս երթն տարի եւ Ս. Էջմիածինը կը լրացնի իւր գոյութեան վեշտասան դարեակը կամ հազար վեցհարիւրամեակը։

Այդ դարագլուխը պէտք է տօնէ հայ ազգը. դա նրա պատմական եւ բարոյական պարտքն է։ Աւելի մի յարմար ժամանակ եւ մի աւելի գեղեցիկ առիթ չենք կարող գտնել այդ առաջարկն անելու համար, քան եթէ այսօր, Ս. Էջմիածնի կաթուղիկէի տօնին։

Ս. Էջմիածնի հազար վեցհարիւրամեակի տօնը հայ ազգի տօնն է, ուստի եւ մենք անտարակոյս ենք, որ այդ տօնի կատարման խնդրում ամենայն տեղերի հայերը պիտի մրցեն միմեանց հետ։ Ս. Էջմիածնի պատմական նշանակութիւնը անբաժան է հայ ազգի նշանակութիւնից, այս կարող ենք նկատել եւ մեր օրերի պատմութիւնն ուսումնասիրելով։ Շողակաթի հիմնարկութեան 1600-ամեայ տարեդարձի օրերին դարձեալ քրիստոնէութիւնն է, որ փրկիչ է հանդիսանում հային։ Եթէ այսօր քաղաքակիրթ ազգերը հետաքրքրւում են մեզնով եւ զբաղւում մեր ճակատագրով, դրա պատճառը այն է, որ մենք քրիստոնեայ ենք. այս հանգամանքը ծանր պարտքեր է դնում մեզ վերայ. մենք պիտի ապացուցանենք աշխարհին թէ՝ ինքներս էլ գնահատում ենք մեր քրիստոնէութիւնը։

Այդ գնահատութիւնը կարող է երեւիլ ահա Ս. Էջմիածնի հիմնարկութեան տասն եւ վեց դարեայ գոյութեան տօնախմբութեամբ։

Մինչեւ այսօր մեր ազգային կեանքում առաջնորդ է հանդիսացել մեզ հայ հոգեւորականութիւնը. նա այս հանգամանքում էլ կը կատարէ իւր պարտքը շնորհիւ իւր ամենից սիրուած պետի, իւր ժողովրդի հօր, Վեհափառ Ս. Ս. Մկրտիչ Կաթուղիկոսի։

Հայ ժողովուրդը միշտ իւր առաջնորդներին հետեւելով կարողացել է կատարել իւր պատմական դերը, այն է՝ միակ առկայծող ճրագն է եղել քրիստոնէութեան բոլոր արեւելեան ազգերի մէջ։ Այսօր, երբ մեր ժողովուրդը առաջնորդուելու հետ եւ յառաջընթացութեան նշաններ է ցոյց տալիս, չենք կասկածում, որ նա էլ ոչ պակաս եռանդով պիտի մասնակցի Ս. Էջմիածնի մեծ դարագլխի տօնախմբութեան։

Արդեօք ինչո՞վ պիտի յաւերժացնենք այդ մեծ դարագլուխը. ահա մի խնդիր, որ «Արարատ»-ի խմբագրութիւնը հրապարակ է հանում։ Թող ամեն մի հայ խորհի այդ մասին. թող ազգային հաստատութիւններից իւրաքանչիւրը իւր անելիքը որոշէ եւ ազգային մամուլը իրան արձագանք դարձնի, որպէս զի երբ օրն ու ժամը հասնի, մենք ամէնքս պատրաստ լինինք։ Մինչեւ 1903 թուականը դեռ բաւական ժամանակ ունենք խորհելու եւ պատրաստուելու այդ մեծ գործի համար, որի վեհութիւնն ստիպում է մեզ օր առաջ խնդիր յարուցանել, որպէս զի մեր պարտքի վճարման համապատասխան լինի եւ նրա վայելչականութիւնը։

Այդ մեծ յիշատակի յաւերժացման համար «Արարատն» եւս ունի իւր առաջարկները, որ հրապարակ պիտի հանէ ազգի հաւանութիւնն ստանալու եւ մտքերը պատրաստելու համար։ Զը մոռանանք մեր նախնեաց մեծ կտակը. «Եկայք շինեսցուք սուրբ զիտրանն լուսոյ»։